ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՈՒ ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Փետրվարի 13-ին, հինգշաբթի, Մայր տաճարում հանդիսավորությամբ նշվեց «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց հազար երեսուն և վեց վկայիցն» ազգային-եկեղեցական ամենանվիրական տոնը և Վեհափառ Հայրապետի անվանակոչության տարեդարձը:

Հակառակ նրան, որ փչում է ձյունախառն քամի, օրը սովորականից տոնական է:

Ժամը 11-ին լվում է Մայր տաճարի զանգերի ուրախ ու խորհրդավոր ղողանջը: Հավատացյալների հոծ բազմությունը դիմում է եկեղեցի:

Օրվա ժամերգությունը և ս. պատարագի երգեցողությունը կատարում են հոգևոր ճեմարանի ուսանողները:

Սկսվում է ս. պատարագը: Օրվա պատարագիչն է հոգ. տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը:

Ժամը 12-ին թափորով Մայր տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը:

Պատարագիչ հայր սուրբը քարոզում է «Գերադասեցինք մահն աստվածապաշտությամբ, քան կյանքն ուրացությամբ» (Եղիշե) բնաբանով: Հայր սուրբն իր քարոզում դրվատում է Վարդանանց ու Ղևոնդյանց սուրբ նահատակությունը Ավարայրի ճակատամարտում, որը դարեր շարունակ ոգեվորել է գալիք սերունդին՝ կյանքի հետագա չարիքներր հեշտությամբ տանելու, ազգրն ու եկեղեցին անվտանգ պահելու համար:

Քարոզի վերջում Նարեկ վարդապետը շնորհավորում է Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնը, ցանկանում նրան քաջառողջություն, արևշատություն՝ ի փառս Մայր Աթոռի պայծառության:

Մայր տաճարի Ավագ բեմի առաջ հանդիսավորությամբ կատարվում է հոգեհանգիստ՝ «Վասն համօրէն ննջեցելոց»:

Սրբոց Վարդանանց օրը տոնն է նաև Վեհափառ Հայրապետի անվանակոչության: Այդ բարեբաստիկ առիթով սուրբ սեղանի առաջ կատարվում է Հայրապետական մաղթանք: Հավատացյալ ժողովուրդը ջերմեռանդությամբ համբուրում է Հայրապետի աջը և բարեմաղթում Նրան երկար ու երջանիկ օրեր:

Նույն օրը, ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի դահլիճում կազմակերպվում է գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Վարդանանց սուրբ հիշատակին:

Հանդեսը նախագահում է Վեհափառ Հայրապետը: Դահլիճը հոտնկայս ունկնդրում է Հայկական ՍՍՀ պետական հիմնը, որով սկսվում է հանդիսությունը: Հոգևոր ճեմարանի տեսուչ հոգեշնորհ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը հուզիչ և սրտառուչ ներածականով բացում է հանդեսը:

Ճեմարանի երգեցիկ խումբը հաջողությամբ կատարում է «Նորահիրաշ պսակաւոր», «Արիացեալք» շարականները, «Թե հայրենեաց պսակադիր», «Իմ հայրենեաց հոգի Վարդան», «Ով դու բարեկամ» երգերը:

Հանդիսատեսի վրա խոր տպավորություն է թողնում Վ. Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծության խմբովին արտասանությունը ճեմարանի բարձր դասարանների սաների կատարմամբ:

Եղիշեի «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհի» հատվածը արտասանում է Գ. լսարանի ուսանող Հովհ. սրկ. Գրվրգյանը, Ա լսարանի ուսանող Խ. Խաչատրյանը ապրումով կատարում է Ռ. Պատկանյանի «Հիմի էլ լռենք» բանաստեղծությունը, Ն. Զարյանի «Զայն հայրենական» պոեմից մի հատված արտասանում է Աբրահամ սրկ. Մարգարյանը:

Օրվա հանդեսի գլխավոր բանախոսն է հոգևոր ճեմարանի գրաբարի դասախոս Ս. Անթոնյանը: Հարգելի բանախոսը նշում է, որ ամեն մի ժողովուրդ իր գոյության ընթացքում ունենում է հիշատակության արժանի, արբագործված պահեր, որոնց պարտական է իր կյանքով: Հայ ժողովրդի համար այդպիսին է 5-րդ դարը, որը նշանակալից է ոչ միայն մշակույթի նվաճումներով, այլև՝ Վարդանանց հերոսամարտով: Բանախոսը վերլուծում է 5-րդ դարի հայ-պարսկական հարաբերությունները, ցույց տալիս նրանց միջև առաջացած այն վիճը, որն սկսվել էր խորանալ տակավին 226 թվականից, երբ Պարսկաստանում իշխանության գլուխ էին անցել Սասանյանները: Հարգելի դասախոսը բացահայտում է ժամանակի տնտեսական, քաղաքական կնճռոտ հարցերը և ցույց տալիս այն դրդապատճառները, որոնց հետևանքով բռնկվեց Ավարայրի ճակատամարտը, որտեղ հայ ժողովուրդը իր հավատքի ուժով և լույսով, հայրենասիրական խորը գիտությամբ պարտության մատնեց բռնակալական ուժի քաղաքականությունը, կարողացավ փշրել իր ստեղծագործ մտքի ու հոգու վրա ծանրացող լուծը:

Հանդիսության վերջում փակման խոսք է ասում Վեհափառ Հայրապետը և մատնանշում, որ Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի համար որոշ իմաստով դեռ չի վերջացել, այն շարունակվել է դարեր շարունակ ու կշարունակվի դեռ այնքան ժամանակ, քանի գոյություն կունենա հայ ազգը և հայրենիքը:

Այսօր,—ասում է Վեհափառ Հայրապետը,—տնտեսության, գիտության և մշակույթի բոլոր բնագավառներում Մայր հողի վրա ապրող հայ ժողովուրդը պայքարում է իր նոր կյանքի առաջընթացի և էլ ավելի պայծառ ապագայի համար: Սփյուռքում ևս,—ասում է Վեհափառը,—մեր ժողովրդի զավակները Ղևոնդյանց և Վարդանանց ուխտապահ վճռականությամբ շարունակում են Ավարայրի ճակատամարտը. եկեղեցիների, դպրոցների, մշակութային սրահների շքեղությամբ, հայ գրի ու գրականության զարգացումովն ու պահպանումովը, մեր եկեղեցու և ազգի սուրբ նահատակների հիշատակին ու ավանդին հավատարիմ մնալու անխախտ հույսով: Վերջացնելով Իր խոսքը, Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» է ասում. դահլիճը հոտնկայս երգում է «Տերունական աղոթքը»:

Նույն օրը, երեկոյան, Մայր տաճարում հանդիսավորությամբ կատարվում է «Տեառնընդառաջ»-ի նախատոնակը: Այդ առթիվ ճեմարանի սաները ավանդական խարույկի համար պատրաստություն են տեսնում: Ներկա է լինում ողջ միաբանությունը, ճեմարանի սաներն ու դասախոսական կազմը: Խարույկը վառում է Վեհափառ Հայրապետը: Նա երկար ձողի հրավառ ծայրը մոտեցնում է հրակայուն դեզին, որը մի ակընթարթում բռնկվում է և հաճելի լույսով լուսավորում շրջապատը: Սկսվում է գեղեցիկ ու զվարճալի պահը, ուսանողները՝ բերկրանքով լցված, թռչկոտում են կրակի շուրջը:

Ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի առթիվ, Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը սեղանակից են լինում Ն. Ս. Օծության՝ Վեհարանի սեղանատանը: Ներկաներից շատերը սրտագին ելույթներով շնորհավորում են Հայոց Հայրապետի անվանակոչության տոնը, որն անցնում է ջերմ մթնոլորտում: